# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<28>> դեկտեմբերի 2013թ. N 431

ք. Արմավիր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ /ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ/ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տրանսպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշման 2-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի ներմարզային կանոնավոր երթուղիների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1 արձանագրությունը և մրցութային ամփոփ թերթիկները.

*որոշում եմ՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի ընդունած որոշումը՝ 2013 թվականի դեկտեմբերի 26-ին անցկացված մրցույթի վերաբերյալ:
2. Թույլատրել՝
   ա/ <<Կարինե 85>> արտադրական կոոպերատիվին <<Արմավիր-Սարդարապատ>> միկրոավտոբուսային երթուղում շահագործվող գազել մակնիշի 140 ԼՏ 28 պետհամարանիշի 2919 Լ դեղին հիմնագույն համարանիշի միկրոավտոբուսի փոխարեն շահագործել գազել մակնիշի 623 OV 61 պետհամարանիշի միկրոավտոբուսը:
   բ/ <<Լիլյա>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը Արմավիր-Նորավան>> միկրոավտոբուսային երթուղում շահագործվող գազել մակնիշի 134 ԼՏ 28 պետհամարանիշի 2968 Լ դեղին հիմնագույն համարանիշի միկրոավտոբուսի փոխարեն շահագործել գազել մակնիշի 649 LT 61 պետհամարանիշի միկրոավտոբուսը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ՄԱՐԶՊԵՏ՝* *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*